Բոլոր ռեժիմային և շահագործման գործունեության ԳՏՏ-ի թերմոդինամիկական և տնտեսական ցուցանիշների վրա առավել խիստ ազդում է արտաքին օդի ջերմաստիճանը: Օրվա ընթացքում այն կարող է փոփոխվել մինչև 15...20°C-ով, իսկ տարվա ընթացքում, օրինակ, -30°C-ից ձմռանը մինչև 40°C ամռանը մոտ 0°C միջին տարեկան ջերմաստիճանի դեպքում:

Էլեկտրատեներգիա արտադրող ԳՏՏ-ների արդյունավետությանը ամռային ամիսներին կտրուկ նվազում է կոմպրեսորի մոտեքում արտաքին օդի խտության և, համապատասխանաբար, դրա ծախսի նվազման հետևանքով, ինչպես նաև արտաքին օդի բարձր ջերմաստիճանների դեպքում սեղմման տեսակարար աշխատանքի աճի պատճառով: Դա պայմանավորված է նրանով, որ որքան օդի տեսակարար ծավալը բարձր է, այնքան ավելի շատ աշխատանք է պահանջվում կատարել սեղմման համար: Դրա հետևանքով հոլլիս-օգոստոս ամիսներին, երբ ջերմաստիճանը հասնում է մինչև $t_{w,օդ} = 35 \dots 40^\circ\text{C}$, աճում է վառելիքի տեսակարար ծախսը b_e և նվազում ԳՏՏ-ի արդյունավետ հզորությունը մինչև դրանվանական (ISO 3977-ին համապատասխանող, 15 °C ջերմաստիճանի դեպքում) արժեքի 80%-ը:



Նկ. 1.11. Օդի ջերմաստիճանի փոփոխությունը օրվա ընթացքում Երևանում (1), Սոչիում (2), Տալլինում (3) և Դուշանբեում (4) պարզեղանակի նամանակը

Նկ. 1.12.-ում ներկայացված են ԳՏՏ-ի Եներգետիկական բնութագրերի վրա արտաքին օդի ջերմաստիճանի ազդեցության կախվածությունները և իրիվ Էլեկտրական բեռնվածքի դեպքում:



Նկ. 1.12. ԳՏՏ-ի հարաբերական հզորություն \bar{N}_{qss} և արդյունավետություն $\bar{\eta}_{qss}$ փոփոխման

կախվածությունը արտաքին օդի ջերմաստիճանից՝ ըստ գործարանային տվյալների

ԳՏՏ-ի Եներգետիկական բնութագրերի գրաֆիկական կախվածությունները կարելի է ձևափոխել անալիտիկի՝ կիրառելով երկրորդ և երրորդ կարգի բազմանդամներ: Որոշ Եներգետիկական ԳՏՏ-ներին բնորոշ Եարտաքին օդի որոշակի ջերմաստիճանի դեպքում աշխատանքի բնութագրերի բեկումն, ինչը բացատրվում է ԳՏՏ-ի գետերատորի առավելագույն հնարավոր Էլեկտրական բեռնվածքի սահմանափակումներով: Այդ դեպքում տեղակայանքի բնութագրերը կարող են

կազմվել էր կոլ հավասարումներից, որոնցից յոլրաքանչյոլրը՝ որոշակի ջերմաստիճանային միջակայքի համար:

Երևանի ՋԷԿ-ում տեղակայված գազային տոլրքի նի համար ստացվել են և օգտագործվել հետագոտոլթյան մեջ հետևյալ մոտարկային կախվածոլթյոլրը.


ԳՏՏ-ի էլեկտրական բեռնվածքի համար, ՄՎտ. երբ $t_{w.o\eta} < -10^{\circ}\text{C}$, $N_{\text{գՏՏ}}^{\text{է}} = 168,62\text{ՄՎտ}$, իսկ երբ $t_{w.o\eta} \geq -10^{\circ}\text{C}$, $N_{\text{գՏՏ}}^{\text{է}} = -3 \cdot 10^{-4} \cdot t_{w.o\eta}^2 - 0,6518 \cdot t_{w.o\eta} + 162,3$:

ԳՏՏ-ի էլեկտրական օ.գ.գ.-ի համար, % երբ $t_{w.o\eta} < -10^{\circ}\text{C}$, $\eta_{\text{գՏՏ}}^{\text{է}} = 36,55\%$, իսկ երբ $t_{w.o\eta} \geq -10^{\circ}\text{C}$, $\eta_{\text{գՏՏ}}^{\text{է}} = -5 \cdot 10^{-4} \cdot t_{w.o\eta}^2 - 0,0265 \cdot t_{w.o\eta} + 36,3$:

Նկ.1.13.-ում ներկայացված է արտադրող գործարանի հանձնարարական -գծապատկերն ըստ հզորոլթյան GT13E2 MXL գազատոլրքի նի համար՝ արտաքի ն ջերմաստիճանից կախված:

Աղ.1.1-ում ներկայացված են նոլրյնատիպ տվյալ ներ ԳՏՏ-ի բնոլթագրերի հաշվարկ ների հիման վրա ք. Երևանի կլիմայական պայման ների համար, ինչպես նաև ԳՏՏ-ի հզորոլթյան շեղոլումը «բազային» ռեժիմի նկատմամբ արտաքի ն օդի 12°C ջերմաստիճանի դեպքոլում:

Ինչպես երևոլում է բերված տվյալ ներից, արտաքի ն օդի -10°C -ից մինչև 39°C ջերմաստիճանային միջակայքոլում ԳՏՏ-ի հզորոլթյոլրը նվազոլում է 168,6-ից մինչև 135,84 ՄՎտ (օ.գ.գ.-ն՝ 36,55-ից 34,45%): ԳՏՏ-ի էլեկտրական հզորոլթյան գգալի կորոլւտ (1,1%-ից ավել) տեղի է ոլնենոլում կոմպրեսորի ներքի ն հզորոլթյան վրա ծախսերի աճի հետևանքով ավելի բարձր ջերմաստիճանով օդի սեղմման դեպքոլում:



Նկ .1.13. GT13E2 MXL գազային տուրբինի ցուցանիշների կախվածությունը $t_{u,or}$ -ից

Աղյուսակ 1.1

ԳՏՏ-ի բնութագրերը և դրանց շեղումը «բազային» ռեժիմի համեմատ

Նշանակումները	Արտաքին օդի ջերմաստիճանը, $t_{u,or}$, °C						
	+12	+39	+36	+21	0	-10	-27
$N_{qss}, ՄՎտ$	153,88	135,84	139,3	147,48	162,3	168,6	168,6
$\Delta N_{qss}, ՄՎտ$	0	-18,04	-14,62	-6,4	8,42	14,72	14,72
$\Delta N_{qss} / N_{qss}, \%$	0	-11,72	-9,5	-4,16	5,48	9,57	9,57
ԳՏՏ-ի օ.գ.ա.ն, %	35,93	34,45	34,75	35,55	36,32	36,55	36,55
$\Delta \eta_{qss}, \%$	0	-1,48	-1,18	-0,38	0,39	0,62	0,62

Շարադրվածից հետևում է, որ ԳՏՏ-ի աշխատանքի արդյունավետության բարձրացման համար, հատկապես շոգ երկրներում, անհրաժեշտ է նախատեսել օդի նախնական հովացման, այսինքն՝ այն ԳՏՏ-ի արդյունավետ աշխատանքի համապատասխանող, պահանջվող պայմաններին մոտեցնելու միջոցներ:

1.6. ԳՏՏ կոմպրեսորների ծծվող օդի բարձր ջերմաստիճանով պայմանավորված հզորության թերարտադրության փոխհատուցումը հովացման համակարգերի օգտագործմամբ

ՀԱՊՅ-ում պաշտպանված ատենախոսական աշխատանքում Ռ.Ա. Ռաֆյանի կողմից Երևանի ՁԷԿ-ի համակցված ցիկլով էներգաբլոկի համար ուսումնասիրվել է ԳՏՏ մատուցվող օդի ջերմաստիճանի ազդեցությունը ԳՏՏ-ի էներգետիկական և արդյունավետության ցուցանիշների վրա տարեկան կտրվածքով: Ուսումնասիրվել են ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի հովացման բոլոր համակարգերը: Դիտարկվել են այդ համակարգերի դրական և բացասական կողմերը: Ուսումնասիրվել է ոչ բարենպաստ կլիմայական պայմաններից բխող ԳՏՏ-ի արտադրողականության և արդյունավետության անկումը վերականգնելու նպատակով առաջարկվող ջրային մշուշապատման հովացման համակարգի կիրառման արդյունքում ստացվող լավարկումը:

Կատարվել է գրականությանում բերված ԳՏՏ ջերմային հաշվարկի հայտնի մեթոդների համակողմանի վերլուծություն՝ պարզելու համար դրանց կիրառելիությունը ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի հովացման համակարգերի արդյունավետության հաշվարկի համար: Բացահայտվել են այն հիմնական թերությունները, որոնք խնդիր են առաջացրել նոր մեթոդիկա մշակելիս.

1. ԳՏՏ արտադրողները չեն բացահայտում ճշման արժեքները տուրբինի և կոմպրեսորի աստիճաններում:
2. ԳՏՏ աշխատող մարմինների էնթալպիաների հաշվարկի աղյուսակային մեթոդն անխուսափելիորեն հանգեցնում է նշանակալի անճշտությունների:
3. Որևէ մեթոդում հաշվի չի առնվում ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի խոնավապարունակությունը:

4. Նաև որևէ հաշվարկային մեթոդով հաշվի չի առնվում, որ ԳՏՏ կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը որոշակի կախվածություն ունի մեջ է գտնվում ներծծվող օդի ջերմաստիճանից:

Առաջարկվել է ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանի փոփոխությունն ազդեցությունը ԳՏՏ կոմպրեսորի ճնշման բարձրացման աստիճանի վրա գնահատող բանաձև: Մանրակրկիտ ուսումնասիրվել է ԳՏՏ էներգետիկական ցուցանիշների փոփոխման բնույթը կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանի, դրսի օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավություն արժեքների լայն տիրույթում:

Ինչպես ցույց են տալիս ատենախոսական աշխատանքում բերված հաշվարկների արդյունքները ԵրՋԵԿ-ի շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը դիտարկվող ջերմաստիճանային տևողականության մի տիրույթում արտադրում է 783,7 մլն. կՎտ·ժ Էլեկտրական էներգիա: Սակայն, եթե դրա հզորությունը լիներ հավասար իր նախագծայինին, այդ նույն տիրույթում այն կարտադրեր 832,6 մլն. կՎտ·ժ Էլեկտրական էներգիա:

Ջրային մշուշապատման համակարգի կիրառության արդյունքում, դիտարկվող ժամանակահատվածում հնարավոր է արտադրել 816,9 մլն. կՎտ·ժ Էլեկտրաէներգիա [34]: Այսինքն բլոկը հովացման համակարգի կիրառման արդյունքում արտադրում է իր նախագծային արտադրանքի 98,1%-ը, մինչդեռ առանց հովացման համակարգի այն արտադրում է 94,1%-ը: Վերականգնված արտադրանքը կազմում է 33,23 մլն. կՎտ·ժ:

Հզորություն տեսանկյունից բերված սվայները վկայում են, որ 17,5°C միջին

ջերմաստիճանի նկատվող 1279,2 ժամերի ընթացքում ԳՏՏ-ի հզորությունը կազմում է նախագծայինի 95,9%-ը, իսկ շոգետուրբի նիւնը՝ 98,2%: Իսկ 32,5°C միջին ջերմաստիճանի դիտարկվող 33,6 ժամերի ընթացքում ԳՏՏ-ի հզորությունը ընկնում է մինչև նախագծայինի 86,2%-ին հավասար:

Այսպիսով, առաջարկվող բարձր ճնշումային մշուշապատման համակարգի միջոցով ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի հովացման դեպքում ԵրՋԵԿ-ի համակցված էներգաբլոկում հնարավոր է փոխհատուցել տարվա 3808 ժամերի ընթացքում դիտարկվող բարձր ջերմաստիճանով պայմանավորված թերատադրված 48,8մլն. կՎտ-ժ Էլեկտրատեներգիայի 68%-ը, և այդ փոխհատուցված արտադրանքի համար վառելիքի ծախսը կազմում է 131,2գրգազ/կՎտ-ժ: Յովացման համակարգի տեղադրման կապիտալ ներդրումների հետզման ժամկետը կազմել է 0,69տարի:

Բարձր ճնշումային մշուշային հովացման համար անհրաժեշտ է աղադրված ջուր, կոմպրեսորի թիակների վնասման և բարձր ջերմաստիճանային գոտու կորոզիոն երևույթներից խուսափելու համար: Սակայն պարտադիր պայման է, որ հովացման համակարգի բոլոր խողովակները և դրանց միացումները լինեն չժանգոտող պողպատից: Եթե ջրի որակը պահանջներին չի համապատասխանում, առաջանում է զգալի վնաս կոմպրեսորի վթարների և կորոզիայի տեսքով:

[35]-ում առաջարկվել է Բահրեյնում ԳՏՏ-ի կոմպրեսոր ներծծվող օդը հովացնելու համար օգտագործել ջերմություն օգտահանող պարզ բրոմալիթիումային աբսորբցիոն համակարգ, ձմռան համեմատ ձմռանը 30°C-ով դրսի օդի ջերմաստիճանի փոփոխությունը փոխհատուցելու նպատակով: Յաշվարկվել է, որ ծխագազերից օգտահանված

ջերմության շնորհիվ հնարավոր է 10°C-ով նվազեցնել մթնոլորտից ներծծվող օդի 40°C ջերմաստիճանը՝ ապահովելով 10% հզորության աճ:

[36]-ով նվազեցնել է երկաստիճան ԱԲՄ-ով հովացման համակարգ 100ՄՎտ հզորությամբ ԳՏՏ-ի համար Բանկոկում: Նվազեցնելով ներծծվող օդի ջերմաստիճանը մինչև 15°C հզորության աճը ընդհանուր առմամբ կազմել է 11%:

[37]-ով պարզ ցիկլով գազատուրբիսային տեղակայանքի և համակցված ցիկլով էլեկտրակայանի մշակված համակարգչային մոդելի կիրառմամբ ցույց է տրվել, որ Յարավային Եվրոպայի համար բնորոշ 40...45 °C դրսի ջերմաստիճանները հանգեցնում են 20%-ից ավելի հզորության կորուստ: Ներկայացվել են գոլորշարար հովացուցիչները և ԱԲՄ-ները համադրելու հնարավոր օգուտները: Առաջարկված աբսորբցիոն համակարգի առավելությունն այն է, որ անկախ մթնոլորտային օդի վիճակից՝ ներծծվող օդը հնարավոր է հովացնել մինչև որոշակի հաստատուն ջերմաստիճան և կայուն կերպով բարձրացնել էլեկտրակայանի հզորությունը:

Իրանում տեղակայված է 170 գազատուրբիսային տեղակայանք 9500ՄՎտ գումարային հզորությամբ, բայց ամռանը շոգ եղանակը բերում է 1900ՄՎտ-ի կորստի: [38]-ով իրականացվել է Իրանական Չաբահար էլեկտրակայանում շոգեաբսորբցիոն սառնարանային տեղակայանքի միջոցով ԳՏՏ ներծծվող օդի հովացման համակարգի տեսական վերլուծություն, ընդ որում արտադրվող հզորությունն ավելացել է 11,3%-ով: Տեսական ուսումնասիրությունները կատարվել են տարեկան հավելյալ 14000 ՄՎտժ էլեկտրաէներգիայի արտադրություն կամ տի աճի հիման

վրա, շահույթաբերությունը գնահատվել է 23,4%,
հետզնման ժամկետը՝ 4,2տարի:


[39]-ում քննարկվել է ամոնիակաջրային ԱՍՄ-ների
օգտագործումը, որոնք աշխատում են ԳՏՏ-ի աշխատած
ծխագազերից օգտահանված ջերմության հաշվին:
Օմանում երկու ԳՏՏ-ների ներծծվող օդի
հովացումը մինչև 7 °C բերում է մի դեպքում 20%,
մյուսում՝ 14% հզորության աճի:

[40]-ում մաթեմատիկական մոդելավորման
միջոցով գնահատվել են հաշվարկային 27,06%
արդյունավետության պարզ ցիկլով ԳՏՏ-ի
աշխատանքի արդյունավետությունը
բարձրացնելու միջոցով հնարավոր է բարձրացնել,
որ եթե կիրառվի ներծծվող օդի հովացման
աբսորբցիոն համակարգ տուրբինի
արդյունավետությունը հնարավոր է բարձրացնել
մինչև 28,22%: Սա համեմատվել է այրման խցում
գոլորշու ներարկման տեխնոլոգիայի հետ, որի
դեպքում տուրբինի արդյունավետությունը կարող
է հասնել 28,63%, և հնարավոր է մինչև 34,98% ավելացում,
եթե կոմպրեսորի և այրման խցի միջև տեղադրվի
ռեգեներատոր:

[41]-ում գնահատվել են Բանկոկում գտնվող
համակցված ցիկլով էլեկտրա-կայանի հզորության
բարելավման եղանակները: Առաջարկվել է կիրառել
շոգեաբսորբցիոն սառնարանային մեքենա
ներծծվող օդի ջերմաստիճանը մինչև 15°C
նվազեցնելու համար: Ակնկալվող հզորության աճը
10,6% է, հետզնման ժամկետը՝ 3,8տարի:

ՇԳՏ-ի սարքավորումների պարագայում ԱԲՍՄ-ի
գեներատորի ջերմության աղբյուր կարող է լինել
ինչպես տուրբինի կամ կաթսայի գոլորշին, այնպես
էլ ջրա-ջրային ջերմափոխանակիչի տաք ջրերը (և կ .1.14)
2ՄՊա ճնշմամբ և 150...180°C ջերմաստիճանով [42], իսկ
որպես ԱԲՍՄ-ի կոնդենսատորի հովացնող միջավայր՝

շոգետուլը բիւի կոնդենսատորից տրվող հիմնական կոնդենսատը 2,1ՄՊա ճնշմամբ և 20...30°C ջերմաստիճանով, նախքան այն ՕԿ-ի կոնդենսատի գազային տաքացուցիչ (ԿԳՏ) մղելը:



Նկ.1.14. Օգտահանիչ կաթսայի ցածր ճնշման կոնտուրում ջրա-ջրային ջերմափոխանակիչի տեղադրաշխման սկզբունքային սխեման.

1. կիպացուցիչի գոլորշու կոնդենսատոր, 2. կոնդենսատային պոմպ, 3. ջրա-ջրային ջերմափոխանակիչ, 4. վերաշրջանառության պոմպ, 5. կոնդենսատի գազային տաքացուցիչ, 6. գազային վառելիքի տաքացման ջերմափոխանակիչ, 7. ջերմային ցանց, 8. ցանցային պոմպ, 9. ՕԿ-ի ցածր ճնշման թմբուկ, 10. ջերմային ցանցի կոլեկտորներ

Ինչպես հայտնի է, քանի որ կոնդենսացիոն ՇԳՏ-ի սխեմայում բացակայում են ԲՃՏ-ները և ՑՃՏ-ները, միակ ջերմափոխանակիչը, որում տաքացվում է կոնդենսատը կոնդենսատորից հետո կիպացուցիչի գոլորշու կոնդենսատորն (ԿԳԿ) է: Այն նախատեսված է շոգետուլը բիւի կիպացուցիչից տրվող գոլորշու հովացման և կոնդենսացման համար: ԿԳԿ-ից հետո հիմնական կոնդենսատը տրվում է ՕԿ-ի ԿԳՏ նախապես տաքացվելուց հետո ԿԳՏ-ի տաք կոնդենսատի հետ խառնման ճանապարհով (վերաշրջանառություն): Այսպիսով ջուրը ԿԳՏ տրվում է 65°C ջերմաստիճանով՝ գազային կողմից ՕԿ-ի պոչային մակերևույթների կորոզիայի կանխարգելման համար: ԿԳՏ-ի վերաշրջանառության գծի վրա տեղադրված է ջրա-ջրային ջերմափոխանակիչ, որի

ջերմունքը ունենում է օգտագործվում է նաև ԿՊՏ-ի այրման խցում այրելու համար վառելիքային գազի պատրաստման կետի ջերմափոխանակիչները: Վառելիքային գազի տաքացման կարգավորման տիրույթը 25...40°C է: Ամառային շրջանում, երբ ջերմային սպառողների թիվը զգալիորեն կրճատվում է, ջրա-ջրային ջերմափոխանակիչն օգտագործվում է միայն վառելիքային բնական գազի տաքացման համար: Այդ դեպքում ԿՊՏ-ի վերաշրջանառության շրից խլվող ջերմունքյան աննշան քանակության հետևանքով ԿՊՏ-ից առաջ կոնդենսատի ջերմաստիճանը դառնում է պահանջվողից բարձր: ԿՊՏ-ն ըստ հեռացող գազերի հոսքի ՕԿ-ի վերջին ջերմափոխանակիչն է, այդ պատճառով կոնդենսատի ջերմաստիճանի բարձրացումը ԿՊՏ-ից առաջ հանգեցնում է ՕԿ-ից հեռացող գազերի ջերմաստիճանի բարձրացմանը:

Յետևաբար, ամառային շրջանում օգտագործելով տաք ջրեր ԱԲՄ-ի աշխատանքի համար՝ օգտահանվում է տուրբինի հեռացող ծխագազերի ջերմունքը և, համապատասխանաբար, նվազում հեռացող գազերի ջերմաստիճանը:

1.7. Խնդրի դրվածքը

Յայաստանը չունի որևէ հանածո վառելիքի ներքին ռեսուրս, ինչի հետևանքով ազգային տնտեսական զարգացումը սերտորեն կապված է էներգիայի գների և ներմուծված էներգակիրների մատչելիության հետ: Երկրի էներգետիկ անվտանգության ամրապնդման կարևորությունը քիչ է և էներգախնայողական և վերականգնող էներգետիկ տեսլանուն գիտերի խթանման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի այս ոլորտում տեսլանիկական հմտությունների ձևավորմանը,

աշխատատեղերի ստեղծմանը և ազգային ածխածնային արտանետումների հետքի նվազմանը: Այդ իսկ պատճառով, մեծ կարևորություն ունի տեղական վերականգնվող և երկրորդային էներգետիկական ռեսուրսների օգտագործումը ՀՆԱ-ի էներգատարունակը ատման նկատառումներով:

Դրված նպատակին հասնելու առավել արդյունավետ ուղիներից մեկն է ջերմային տրանսֆորմատորների հիմքի վրա տեղական վերականգնվող էներգառեսուրսների լայնամասշտաբ օգտագործումը և ավանդական, ոչ ավանդական և վերականգնվող էներգիայի աղբյուրների համակցված օգտագործմանն ուղղված նորմոտեցումները:

Ջերմային էլեկտրական կայանների շահավետություն և էկոլոգիական անվտանգությունը բարձրացման զգալի պաշարները կապված են առկա էական ցածր պոտենցիալային էներգիայի աղբյուրի՝ տուրբինների բանած շոգու կոնդենսացման ջերմություն օգտակար օգտագործումը կազմակերպելու հետ:

ՁԷԿ-երի շոգետուրբինային և շոգեզագատուրբինային տեղակայանքների կոնդենսատորների «թափոնային» ջերմությունն առավել արդյունավետ օգտահանել թույլ են տալիս նոր լուծումները՝ ՁՏ-ների օգտագործմամբ: Այդ ջերմությունը հետագայում փոխանցվում է ցանցային ջրին կամ կիրառվում ցիկլի ներսում, օրինակ, վառելիքի, քիմիապես մաքրված ջրի կամ հիմնական կոնդենսատի տաքացման համար: Գրականությունում բերված սխեմատիկ լուծումների մանրակրկիտ վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ էներգաարդյունավետության բարձրացման նպատակով ջերմամատակարարման համակարգերում և ջերմային

Էլեկտրակայաններում ՁՊ-ների օգտագործման
շնորհիվ հնարավոր է հասնել վառելիքի ծախսի
զգալի կրճատման:

ԳՏՏ-ների էներգետիկական և տնտեսական
բնութագրերի փոփոխությունը շրջակա միջավայրի
պարամետրերի ազդեցությունը զգալի է: Ուստի ՀՀ
էներգահամակարգի համար գործնական կարևոր
նշանակություն ունեցող խնդիր է շոգեգազային
ցիկլով աշխատող էներգաբլոկների
էներգետիկական ցուցանիշների՝ նախագծային
արժեքներին մոտեցումը ապահովող
տեխնոլոգիաների մշակումը: Այս աշխատանքում
խնդիր է դրված երևանի ՁԷԿ-ի համակցված ցիկլով
էներգաբլոկի օրինակով, ԳՏՏ մատուցվող օդի
բարձր ջերմաստիճանի ոչ բարենպաստ ազդեցության
հետևանքով էներգաբլոկի արտադրողականության և
արդյունավետության անկումը վերականգնելու
նպատակով, մշակել հովացման համակարգի
նախագծման որոշակի մեթոդիկա՝ հաշվի առնելով
բնակլիմայական պայմանները:

Երևանի ՁԷԿ-ի համակցված ցիկլով էներգաբլոկի
համար Ռ.Ա.Ռաֆյանի կողմից առաջարկվել է կիրառել
ջրային մշուշապատման հովացման համակարգ,
ուսումնասիրվել է ստացվող լավարկումը, սակայն
չի դիտարկվել սառնարանային մեքենաների
օգտագործմամբ հովացման տարբերակի կիրառման
նպատակահարմարությունը: Ուստի որոշակի
հետաքրքրություն է ներկայացնում խոնավ
մշուշային հովացման և առաջարկվող հովացման
մեթոդի՝ ջերմային տրանսֆորմատորների
կիրառման դեպքում ստացվող լավարկման
համեմատումը: ԱՍՄ-ներով հովացման համակարգերի
վերաբերյալ [35-41] գրականության վերլուծության
արդյունքում բացահայտվել է, որ, բնակլիմայական
պայմաններից կախված, սառնարանային մեքենայի

ցրտարտադրողականության ընտրության հարցը
բավարար չափով ուսումնասիրված չէ: Ելնելով
վերը նշվածից, առաջադրվել են և լուծվել հետևյալ
հիմնական խնդիրները.


- ուսումնասիրել ՀՀ-ում ՁՊ-ների օգտագործման
նպատակահարմարությունը,
- գնահատել ՁԵԿ-երում ՁՏ կիրառման դեպքում
ջերմային շահավետության ցուցանիշների
փոփոխությունները և օրգանական վառելիքի
տնտեսումը,
- իրականացնել արսորբցիոն և
շոգեկոմպրեսորային ջերմային տրանսֆոր-
մատորների համեմատական վերլուծությամբ
ընտրության հիմնավորում,
- իրականացնել ԳՏՏ-ի կոմպրեսորներ ծծվող օդի`
սառնարանային մեքենաներով և գոլորշարար
հովացման համակարգերի համեմատությունը,
- մշակել ԳՏՏ-ի աշխատանքի վրա տարածաշրջանի
բնակլիմայական պայմանների ազդեցության
հաշվի առնմամբ և ԳՏՏ-ի մուտքում օդի
հովացման դիտարկմամբ ԾԳՏ-ի ջերմային
հաշվարկի մեթոդ,
- տարածաշրջանի կլիմայական պարամետրերի
վիճակագրության օգտագործմամբ, կիրառման
նպատակահարմարության ուսումնասիրմամբ և
համապատասխան վերլուծությամբ`
իրականացնել ԳՏՏ-ի մուտքում օդի հովացման
համակարգի օպտիմալ տարբերակի ընտրություն:

**ԳԼՈՒԽ 2. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊՐՈԼՅԵԿՏ

Ջերմային մեքենաներն ըստ նշանակության կարելի է տարանջատել երեք դասի .

- ջերմային շարժիչներ, որոնցում իրականացվում է ջերմության փոխակերպում մեխանիկական աշխատանքի :
- ջերմային պոմպեր (տաքացնող մեքենաներ), որոնք հակադարձ ջերմային շարժիչներ են և ծառայում են ջերմությունն ստանալու համար :
- սառնարանային մեքենաներ, որոնք նախատեսված են ցուրտ ստանալու համար, այսինքն՝ ջերմությունն իլելու համար հովացվող մարմնից կամ շինությունից, որում պահանջվում է պահպանել շրջապատող միջավայրից $T_{2,u}$ ավելի ցածր ջերմաստիճան (նկ .2.1):




Նկ. 2.1. Ջերմային շարժիչի (ա), ջերմային պոմպի (բ) և սառնարանային տեղակայանքի (գ) աշխատանքի սխեման

Այն տեխնիկական սարքավորումները, որոնց միջոցով արտաքինից կատարած աշխատանքի (ծախսած էներգիայի) շնորհիվ հնարավոր է իրականացնել ջերմության հաղորդումը ջերմաստիճանային էջերի հակառակ ուղղությամբ, այսինքն՝ ցածր ջերմաստիճանով ջերմադրյունը ավելի բարձր ջերմաստիճան ունեցողին, կրում են ջերմունքային տրանսֆորմատորները նդհանուր անվանումը: Դրանց աշխատանքի սկզբունքը ձևակերպվել է Ս.Կառնոյի աշխատունք ունենեցում:

Թերմոդինամիկական տեսանկյունից սառնարանային մեքենաների (ՍՍ) և ջերմային պոմպերի (ՋՊ) գործողության միջև սկզբունքային տարբերությունն չկա: Դրանք տարբերվում են միայն պրոցեսների ջերմաստիճանային մակարդակով և,

ամենակարևորը, նշանակությունը [43]: Այդ կապակցությունը դիտարկենք Ռենկինի իդեալական ցիկլի օգտագործման երեք տարբերակ (նկ.2.2): Ուղիղ ցիկլն օգտագործվում է ջերմային շարժիչներում, իսկ հակառակ ցիկլերը՝ ջերմային պոմպերում և սառնարանային մեքենաներում: Ցիկլերը տարբեր դասավորություն ունեն շրջապատող միջավայրի ջերմաստիճանի համապատասխանող $T_{2,u}$ իզոթերմի նկատմամբ, որի իմաստը տարբեր է յուրաքանչյուր դիտարկվող տեղակայանքի համար:



Նկ.2.2.Ջերմային շարժիչի և ջերմոլթյան տրանսֆորմատորների Ռենկինի թերմոդինամիկական ցիկլերը

Ուղիղ ցիկլում ջերմափոխանակության հիմնական պրոցեսներն ընթանում են շոգեգեներատորում (1-4) և կոնդենսատորում (5-1): Ընդ որում շոգեգեներատորում ստացած Q_1 բարձր պոտենցիալային ջերմոլթյունը ստացվում է վառելիքի այրման հաշվին, իսկ կոնդենսատորում հեռացված Q_2 ջերմոլթյունը Q_1 -ի ցպակաս է Լօգտակար աշխատանքը ստանալու համար օգտագործված ջերմոլթյան քանակության չափով: (5-1) պրոցեսում

ջեռամասի խանցման ասպահովման համար կոնդենսացման ջեռամաս տիճանը պետք է շրջապատող միջավայրի $T_{2,u}$ ջեռամաս տիճանից բարձր լինի: Տվյալ դեպքում որպես $T_{2,u}$ հանդես է գալիս կոնդենսատորում հովացնող ջրի ջեռամաս տիճանը, որը կախված է տեխնիկական շրամատակարարման համակարգի տեսակից և աղբյուրից: Ի տարբերություն ուղիղ ցիկլի՝ հակառակ ցիկլում Q_2 հեռացված ջեռմուկները բանոլ մարմնին գոլորշացուցիչում հաղորդված Q_1 ջեռմուկների քանակությունից ավել է արտաքինից ստացած էրացուցիչ աշխատանքի շնորհիվ:

ՁՊ-ի համար գոլորշացուցիչում (1-5) ջեռամաս տիճանը ցածր է շրջապատող միջավայրի ջեռամաս տիճանից անհրաժեշտ ջեռամաս տիճանային տարբերության չափով: Ընդ որում որպես շրջապատող միջավայր դիտարկվում է ցածր պոտենցիալային ջեռմուկների օրինակ, ջրամբարների ջուրը: Եթե ՁՊ-ն օգտագործվում է ջեռուցման համար, ապա բանոլ մարմինը կոնդենսանում է՝ ջեռմուկները ցանցային ջրին հաղորդելով, որի ջեռամաս տիճանը $T_{g,2}$ պետք է կոնդենսացման ջեռամաս տիճանից ցածր լինի նվազագույն թույլատրելի ջեռամաս տիճանային տարբերության՝ δT չափով: Ընդ որում $\Delta T_{uy} = T_{g,2} - T_{2,u}$ ջեռամաս տիճանային տարբերությունն է որոշում ջեռմային պոմպի կողմից արտադրված ջեռմուկների ջեռամաս տիճանային պոտենցիալի աճը:

ՍՄ-ում կատարվում է համանման պրոցես, սակայն ջեռմուկներն է խլվում ոչ թե շրջապատող միջավայրից, այլ սառնարանային խցից՝ արտանետվելով շրջապատող միջավայր: Ընդ որում գոլորշացման ջեռամաս տիճանը պետք է δT չափով ցածր

լի նի քան սառնարանային խցում T_u ջերմաստիճանը, իսկ կոնդենսատորում ջերմաստիճանը, համապատասխանաբար, պետք է լի նի $T_{2,u}$ -ի ցրարձր: δT -ով պայմանավորված սահմանափակումները կրճատում են (2-1) պրոցեսում ջերմության հեռացման հնարավորությունները: Այդ պատճառով թերմոդինամիկական ցիկլը փակելու համար իրականացվում է կոնդենսատի դրոսելում կոնդենսատորի ճնշումից մինչև գոլորշացման ճնշումը: Դրա արդյունքում բանող մարմինը մասնակիորեն գոլորշանում է, և գոլորշացուցչի մուտքում կարելի է դիտել որոշ քանակությամբ գոլորշու պարունակություն (2-6):

Վերը նկարագրված ցիկլն իրագործող ջերմության տրանսֆորմատորները կոչվում են շոգեկոմպրեսորային: Դա ջերմության փոխակերպման սարքավորումների լայնորեն տարածված, սակայն անենևին միակ տեսակը չէ:

2.2. Ջերմային պոմպերի աշխատանքի արդյունավետությունը

Ինչպես հայտնի է, ցանկացած թերմոդինամիկական պրոցես, ընդհանուր դեպքում, ՋՊ-ում կարող է ներկայացվել իր երեք բաղադրիչներով՝ ջերմափոխանակությամբ, ՋՊ-ի կողմից (կամ նրավրա) կատարած աշխատանքով և ներքին էներգիայի փոփոխությամբ: Այդ դեպքում ադիաբատ պրոցեսը, միջավայրի հետ ջերմափոխանակության բացակայության հետևանքով $\Delta Q = 0$ հանգում է միայն վերջին երկու բաղադրիչներին, իսկ թերմոդինամիկայի առաջին օրենքը ստանում է հետևյալ տեսքը. $\Delta U = -A$, որտեղ ΔU -ն համակարգի ներքին էներգիայի փոփոխությունն է, A -ն արտաքին մարմինների վրա կատարված աշխատանքը:

Համակարգի էներգիայի S փոփոխությունն համակարգի սահմաններով շերմություն փոխանցման արդյունքում տեղի չի ունենում:

Շոգեկոմպրեսորային շերմային պոմպերի աշխատանքի ընթացքում միշտ տեղի ունի (2.1) հարաբերակցությունը.

$$Q_2 + Q_{m,2} = N_e + Q_0 \quad (2.1)$$

Պրոցեսի արդյունավետությունը բնութագրում է ֆոփոխակերպման գործակցի (COP - Coefficient of performance) թվային արժեքը, որքան այն մեծ է, այնքան արդյունավետ է շերմային պոմպը:

$$\varphi = \frac{Q_2 + Q_{m,2}}{N_e} = 1 + \frac{Q_0}{N_e} = 1 + \varepsilon, \quad (2.2)$$

որտեղ Q_0 -ն ցածր շերմաստիճանային աղբյուրից խլված շերմաքանակն է (սառնարանային մեքենայի ցրտարտադրողականությունը), ε -ը՝ սառնարանային մեքենայի սառնարանային գործակիցը: (2.2)-ից հետևում է, որ φ -ն միշտ մեկից մեծ է: COP-ի իմաստը հետևյալն է. այն հավասար է շերմային պոմպի կողմից տրված շերմային էներգիայի ($Q_2 + Q_{m,2}$) և կոմպրեսորի աշխատանքի վրածախսված էլեկտրական էներգիայի (N_e) շերմային համարժեքի հարաբերությանը:

ՁՊ կիրառման արդյունքում էներգա- և ռեսուրսախնայողությունը ձեռք է բերվում ներկրվող բնական գազի փոխարեն տեղական երկրորդային թափոնային և վերականգնվող շերմություն աղբյուրների օգտագործման հաշվին: Առևտրային շերմությունը $Q_2 + Q_{m,2}$ արտադրվող $\varphi=4$ դեպքում 75%-ով բաղկացած է այդ աղբյուրների փոխակերպված շերմությունից Q_0 : Դա անվճար տեղական էներգետիկական հումք է, որը ՁՊ-ում էլեկտրաէներգիայի համեմատաբար ոչ բարձր ծախսերի հաշվին N_e (25%) փոխակերպվում է ցածր

ի ն ք ն ար ժ ե ք ո վ Է կ ո լ ն գ ի ա պ Ե ս մ ա ք ո ւ ր ա ն և տր այ ի ն ջ Ե ր մ ո ւ թ յ ա ն :


COP-ը կ ախ վ ա ծ Է ` ց ա ծ ր պ ո տ Ե ն ց ի ա լ ա յ ի ն ջ Ե ր մ ո ւ թ յ ա ն ա ղ ք յ ո ւ ր ի և ք ա ր ձ ր ջ Ե ր մ ա ս տ ի ճ ա ն ա յ ի ն ջ Ե ր մ ո ւ թ յ ա ն ս պ ա ռ ի չ ի ջ Ե ր մ ա ս տ ի ճ ա ն ն Ե ր ի տ ա ր ք Ե ր ո ւ թ յ ո ւ ն ի ց , ս ա ն և ար ա ն ա յ ի ն ա գ Ե ն տ ի թ Ե ր մ ո դ ի ն ա մ ի կ ա կ ա ն և ջ Ե ր մ ա \$ ի գ ի կ ա կ ա ն հ ա տ կ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի ց [44], ց ի կ լ ի թ Ե ր մ ո դ ի ն ա մ ի կ ա կ ա ն ա ն ա ն ձ ն ա հ ա տ կ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի ց և ջ Ե ր մ ա յ ի ն պ ո մ պ ի կ ա ռ ո ւ ց վ ա ծ ք ի տ Ե խ ն ի կ ա կ ա ն կ ա տ ա ր Ե լ ո ւ թ յ ո ւ ն ի ց : Կ ա խ վ ա ծ ա յ դ գ ո ր ծ ո ն ն Ե ր ի ց ` COP-ի ի ր ա կ ա ն ար ժ Ե ք ն Ե ր ը տ ա տ ա ն վ ո ւ մ Ե ն 2,5...5,5 մ ի ջ ա կ ա յ ք ո ւ մ :

Ի դ Ե ա լ ա կ ա ն Ջ Պ-ի հ ա մ ար COP-ն ար տ ա հ ա յ տ վ ո ւ մ Է հ Ե տ ն յ ա լ ք ա ն ա ձ և ո վ `

$$\varphi_{\text{ը}} = T_{\text{կ}} / (T_{\text{կ}} - T_{\text{գ}}), \quad (2.3)$$

ո ր տ Ե դ $T_{\text{կ}}$ և $T_{\text{գ}}$ - կ ո ն դ Ե ն ս ա ց մ ա ն և գ ո լ ո ր շ ա ց մ ա ն ք ա ց ա ր ձ ա կ ջ Ե ր մ ա ս տ ի ճ ա ն ն Ե ր ն Ե ն :

Ո ր ք ա ն փ ո ք ր Է ջ Ե ր մ ո ւ թ յ ա ն ա ղ ք յ ո ւ ր ի և ջ Ե ռ ո ւ ց մ ա ն կ ո ն տ ո ւ ր ո ւ մ ջ Ե ր մ ա ս տ ի ճ ա ն ն Ե ր ի տ ա ր ք Ե ր ո ւ թ յ ո ւ ն ը , ա յ ն ք ա ն փ ո խ ա կ Ե ր պ մ ա ն գ ո ր ծ ա կ ի ց ը մ Ե ծ Է (և կ .2.3): Դ ր ա հ ա մ ար ն պ ա տ ա կ ա հ ար մ ար Է ջ Ե ռ ո ւ ց Ե լ շ ի ն ո ւ թ յ ո ւ ն ը ց ա ծ ր ջ Ե ր մ ա ս տ ի ճ ա ն ա յ ի ն հ ա մ ա կ ար գ ո վ [45]. «տ ա ք հ ա տ ա կ » հ ա մ ա կ ար գ ո վ կ ա մ օ դ ա յ ի ն ջ Ե ռ ո ւ ց ո ւ մ ո վ , ք ա ն ի ո ր ա յ դ դ Ե պ ք ո ւ մ ջ Ե ր մ ա կ ր ի ջ Ե ր մ ա ս տ ի ճ ա ն ը չ պ Ե տ ք Է լ ի ն ի 35°C-ի ց ք ա ր ձ ր :



Նկ. 2.3. Ի դեպի ական և իրական փոխակերպման գործակիցները կախված ությունը սառնարանային ապեռտի գոլորշացման և կոնդենսացման ջերմաստիճաններից

2.3. Յայաստանում ջերմային պոմպերի ներդրման նպատակահարմարություն և հետզնման ժամկետի գնահատումը

Յայաստանը հետեմնում զարգացած երկրներից ՋՊՏ-ների արտադրություն և տնտեսություն տարբեր ոլորտներում կիրառմամբ: ՅՅ-ում ՋՊՏ-ների արդյունաբերական արտադրությունը չկա, սակայն ներդրված տեղակայանքները, որպես կանոն, նույնիսկ ոչ միշտ օպտիմալ պարամետրերի դեպքում հաստատում են ՋՊ կիրառման առավել ությունները և առանձնահատկությունը՝ որպես արդյունավետ էներգախնայող ջերմություն աղբյուրներ:

Ինչքան էլ արդյունավետ լինի ջերմային պոմպը, նրա գրավչությունը պատվիրողի համար կախված է ոչ այնքան նրա տեխնիկական կատարելությունից կամ օգտագործման սխեմայից, որքան պետության սակագնային քաղաքականությունից:

Ջերմային պոմպի աշխատանքի համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի համար ծախսերը կլինեն ավելի

փոքր, քան ավանդական ջեռուցման համար օգտագործվող բնական գազի կամ ջերմային էներգիայի ձեռք բերումը, եթե պահպանվում է հետևյալ անհավասարությունը.

$$U_z < (\varphi/\eta) \cdot U_q, \quad (2.4)$$

որտեղ U_z -ն էլեկտրաէներգիայի սակագինն է, U_q -ը՝ ավանդական էներգակիրներին ցորևեմեկի սակագինը, φ -ն՝ ՁՊ փոխակերպման գործակիցը, η -ն՝ ավանդական ջերմության գեներատորի օգտակար գործողության գործակիցը:

Ջերմային պոմպի արդյունավետության որոշման կարևոր չափանիշներինց է հետզնման ժամկետը, որի որոշման համար անհրաժեշտ է գնահատել շահագործման ծախսերի տնտեսումը: Էներգակիրներին առումով շահագործման ծախսերի տնտեսումը՝ *Շ դրամ/տարի*, ջերմային պոմպի օգտագործման դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma = Q \cdot (U_q/\eta - U_z/\varphi), \quad (2.5)$$

որտեղ Q -ն ջեռուցման ժամանակաշրջանում շենքի ջեռուցման համար անհրաժեշտ ջերմային էներգիայի քանակն է, *կՎտ·ժ*: Այս բանաձևն օգտագործելու համար սակագները՝ U_z և U_q , պետք է արտահայտված լինեն միևնույն չափման միավորով:

(2.4) պայմանի իրականացումը մեծամասամբ կախված է էլեկտրաէներգիայի և վառելիքի սակագների հարաբերությունից (U_z/U_q):

Յաշվարկները ցույց են տալիս, որ $U_z/U_q < 2,5$ դեպքում ՁՊ տեխնիկայի հետզնման ժամկետը կազմում է 2...3 տարի: Ծվեդիայում՝ «ջերմային պոմպերի երկրում», այդ ժամկետը կազմում է 1,3, Գերմանիայում՝ 2,2: Նախկին ԱՊՅ երկրներում այդ հարաբերության մակարդակը 10 էր, որն էլեկտրահաղորդակով ՁՊ-ի լայնածավալ կիրառման անշահավետության

պատճառներից մեկն էր, չնայած՝ առաջնային էներգիայի զգալի խնայողությունը: Այժմ Յայաստանում այդ հարաբերությունները կազմում է 3: Կարելի է ակնկալել, որ Յայաստանի անցումը միջազգային գներին կխթանի ընդհանուր առմամբ էներգախնայող տեխնոլոգիաների և մասնավորապես ջերմապոմպային տեխնոլոգիաների ներդրմանը՝ ջերմության արտադրության գործում:

Չմեծությունները որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{\text{ջերմ}} = q \cdot V \cdot n \cdot (t_{\text{հ}} - t_{\text{դ}}) = 24 q \cdot V \cdot D \cdot 10^{-3}, \text{կՎտ} \cdot \text{ժ} \quad (2.6)$$

որտեղ V -ն շենքի ներքին ծավալն է, 10^3 , և $V = Fh$, որտեղ F -ը մակերեսն է, իսկ h -ը՝ բարձրությունը, n -ը՝ ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը սվյալ բնակավայրում, ընդունվում է ըստ ՀՀԾՆ IV-12.02.01-04, հավելված է [46], o ը, $t_{\text{հ}}$ -ն սենքի ներսի ջերմաստիճանն է, ընդունվում է ըստ СН 23-101-2004 աղ. 1 [47], $^{\circ}\text{C}$, $t_{\text{դ}}$ -ն արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանն է, բնակավայրից կախված, ընդունվում է ըստ ՀՀԾՆ IV-12.02.01-04, հավելված է, $^{\circ}\text{C}$, D -ն ջեռուցման շրջանի ջերմաստիճան-օրերի քանակն է սվյալ բնակավայրում, $^{\circ}\text{C} \cdot \text{օր}$: q -ն շենքի տեսակարար ջերմային բնութագիրն է, $\text{կՎտ} \cdot \text{ժ} / (10^3 \cdot \text{C} \cdot \text{օր})$, այսինքն՝ օրական ջերմային էներգիայի ծախսը շենքի 10^3 -ի ջեռուցման համար, երբ դրսի և ներսի օդի ջերմաստիճանների միջև տարբերությունը 1°C է: Տվյալ դեպքում այն չափվում է $\text{կՎտ} \cdot \text{ժ}$: Այդ մեծությունները ցույց է տալիս էներգաարդյունավետության չափը և կարող է ունենալ տարբեր արժեքներ: Յայաստանի համար այն կազմում է $14 \cdot 10^{-3} \text{ կՎտ} \cdot \text{ժ} / (10^3 \cdot \text{C} \cdot \text{օր})$:

Կապիտալ ներդրումները՝ ΔK , որոշվում են որպես ջերմային պոմպի և ավանդական ջեռուցման համակարգի գնման կապիտալի տարբերություն: Այդ

դեպքում պարզ հետզման ժամկետը ($R\sigma$, տարի) կորոշվի հետևյալ բանաձևով՝

$$\Delta\sigma = \frac{\Delta K}{C} = \frac{\Delta K}{Q_{տար} \cdot \left(\frac{U_0}{\eta} - \frac{U_E}{COP} \right)} : \quad (2.7)$$

Այժմ Յայաստանում շենքերի ջեռուցման և օդափոխության աշխատող համակարգերում տեղի է ունենում որոշ չափով իրենց գործառույթների կրկնօրինակում. օդափոխության համակարգերը ամռանը շենքերում կատարում են հովացում, անցումային ժամանակաշրջանում շենքերի ջեռուցում (ՋՊ-ի ռեժիմ), իսկ ջեռուցման համակարգերը նույնպես շենքերում ցուրտ ժամանակ արտադրում են տաքություն: Կապիտալ ծախսերի տեսանկյունից երկուսի փոխարեն արդյունավետ է օգտագործել մեկ համակարգ: Միջերկրածովյան երկրներում (Իսպանիա, Իտալիա և այլն) օդափոխության համակարգերում ՋՊ-ի ռեժիմով ոչ մեծ բացասական ջերմաստիճանային տատանումներն ապահովում են շենքերում ամբողջ տարվա ջերմաստիճանը: Սակայն սարքավորումների նախագծման առանձնահատկությունները, իսկավելի հատուկ՝ Յայաստանի շենքերի համար բացասական ջերմաստիճաններում աշխատանքի սահմանափակումը մինչև այժմ թույլ էր տալիս օգտագործել նույն սխեման: Այդուհանդերձ նոր տիպի օդափոխության համակարգերը Յայաստանի կլիմայական պայմաններում արդեն ծառայում են ոչ միայն ամռանը շենքի հովացման համար, այլև հնարավորություն են տալիս ցուրտ ժամանակաշրջանում իրականացնել ջեռուցում (նույնիսկ -20°C արտաքին ջերմաստիճանի դեպքում) [48]:

Որպես գազով ջեռուցման կաթսայատան համեմատ օդային ՋՊ-ի օգտագործման տնտեսական արդյունավետության օրինակ դիտարկենք Յայաստանի մի քանի քաղաքների պայմաններում 400M^2

սպասարկվող տարածքով արդյունաբերական գրասենյակային շինություն:

Կաթսայատան միջոցով ավանդական ջեռոցման տարբերակը կարժենա 23600 ԱՄՆ դոլլար, օդային ՋՊ-ի միջոցով ջեռոցուման համար կապիտալ ծախսերը կկազմեն՝ 27500 ԱՄՆ դոլլար: Այսպիսով, ՋՊ-ը կապիտալ ծախսերի տեսանկյունից մոտ 16,5%-ով թանկեզազային կաթսայի համեմատ: Գազային կաթսայից անցնելիս ՋՊ-ի կապիտալ ծախսերի մեծացումը կազմում է [49]

$$\Delta K = 27500 - 23600 = 3900 \text{ ԱՄՆ դոլլար} :$$

Շենքի ջեռոցման համար ջերմային էներգիայի տարեկան ծախսը,

$$Q_{\text{ջեռ}} = q \cdot Fh \cdot n \cdot (t_{\text{է}} - t_{\text{դ}}) = 14 \cdot 10^{-3} \cdot 400 \cdot 3 \cdot 140 \cdot (20 - 1) = 44688 \text{ կՎտ} \cdot \text{ժ} :$$

Բնական գազի տարեկան ծախսը կկազմի.

$$B_{\text{ջեռ}} = \frac{44688 \cdot 860}{8000 \cdot 0,9} = 5337,7 \text{ մ}^3 / \text{տարի} :$$

Ջերմային պոմպի օգտագործման դեպքում էլեկտրական էներգիայի ծախսը

$$W_{\text{էլ.էն}} = \frac{44688}{3,45} = 12953 \text{ կՎտ} \cdot \text{ժ} / \text{տարի} :$$

Կաթսայատան փոխարեն ջերմային պոմպեր օգտագործելու դեպքում շահագործման ծախսերի կրճատումը.

$$\Delta \text{Շ} = 5337,7 \cdot 139 - 12953 \cdot 45 = 159060 \text{ դրամ} / \text{տարի} = 329,5 \text{ ԱՄՆ դոլլար} / \text{տարի} :$$

Այդ դեպքում հետգնման ժամկետը կկազմի

$$\text{Յժ} = 3900 / 329,5 = 11,8 \text{ տարի} :$$

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդլայնված ջերմաստիճանային միջակայքի և բարձր էներգետիկական արդյունավետության շնորհիվ ՅՅ պայմաններում հնարավոր է ժամանակակից օդա-օդային ջերմային պոմպերի կիրառությունը ինչպես օդորակման համար, այնպես էլ որպես հիմնական ջերմություն աղբյուր շենքերի ջեռոցման համար: Վերը ներկայացված

հաշվարկի ալգորիթմի միջոցով հնարավոր է գնահատել ֆինանսական ծախսերի կրճատումը և հետզնման ժամկետը (աղ.2.1):

Բերված հաշվարկներից երկուսն է, որ ՋՊ հետզնման ժամկետը նվազելու է եներգիայի փոխակերպման գործակցի աճին, տեղակայված հզորությունն օգտագործման ժամերի թվի ավելացմանը, $U_{էլ}/U_{գազ}$ հարաբերության փոքրացմանը գույքնթաց [49]:

Այսպիսով, շարադրված մեթոդիկայի հիման վրա կարելի է նախապես գնահատել գազային կաթսայատների փոխարեն ՋՊ կիրառման նպատակահարմարությունը: Ընդ որում, ՋՊ կոմպրեսորի երաշխավորված ծախսերի ժամկետը 60000 ժ է: Համապատասխանաբար, ջերմային պոմպը կծառայի մոտ 25 տարի մինչև առաջին կապիտալ վերանորոգումը: Այսպիսով, այսօր ջերմային պոմպի ձեռք բերումը և տեղադրումը արդյունավետ ներդրում է, որը ոչ հեռու ապագայում երաշխավորված կտնտեսի ներդնողի միջոցները:

Հայաստանի միջարքքաղաքներում օդային ջրի կիրառման

նպատակահարմարությունը հաշվարկի արդյունքները

	Երևան	Գյումրի	Վանաձոր	Դիլիջան	Ջերմուկ
Ջեռուցման տևողություն (n), օր	140	189	181	178	212
Օդի միջին ջերմաստիճանը ջեռուցման սեզոնում ($t_{\text{ջ}}$), °C	1	-2,1	0,8	1,7	-1,5
Ջեռուցման շրջանի ջերմաստիճան-օրերի քանակն է տվյալ բնակավայրում (D), °C·օր	2660	4176.9	3475.2	3257.4	4558
Ջեռուցման ժամանակաշրջանի COP [48]	3,45	3,24	3,29	3,51	3,27
Օդի միջին տարեկան ջերմաստիճանը, °C	11	6,5	7,4	8,1	4,1
Ջերմային էներգիայի տարեկան ծախսը ջեռուցման համար ($Q_{\text{ջ}}$), կՎտ·ժ	44688	70172	58383	54724	76574
Գազի միջին տարեկան ծախսը ջեռուցման համար ($B_{\text{ջ}}$), մ ³ /տարի	5338	8382	6974	6537	9146
Սակագինը գազի համար ($U_{\text{գ}}$), դր/մ ³	139				
Սակագինը էլեկտրաէներգիայի համար ($U_{\text{է}}$), դր/կՎտ·ժ	45				
Կապիտալ ծախսերը գազային ջեռուցման համար ($K_{\text{գ}}$), հզ. դր	11392				
Կապիտալ ծախսերը ջերմային պոմպի համար ($K_{\text{է}}$), հզ. դր	13275				
Կապիտալ ծախսերի տարբերությունը ΔK , հզ. դր	1883				
Շահագործման ծախսերը գազային վառելիքի համար ջեռուցման սեզոնում ($C_{\text{գ}}$), դր/տարի	741945	1165049	969326	908576	1271348
Էլեկտրաէներգիայի ծախսը ջերմային պոմպի կիրառման դեպքում ($W_{\text{է}}$), կՎտ·ժ/տարի	12953	21658	17746	15591	23417
Շահագործման ծախսերը էլեկտրաէներգիայով աշխատող ջերմային պոմպի համար ջեռուցման սեզոնում ($C_{\text{է}}$), դր/ամ/տարի	582887	974610	798556	701593	1053776

Գազային կաթսայատնից ջերմային պոմպի անցման դեպքում շահագործման ծախսերի տարբերություն (ΔC), դրամ/տարի	159058	190439	170769	206982	217572
Յետգնման ժամկետ (R), տարի	11,8	9,9	11	9,1	8,7

2.4. Ջերմամատակարարման

Էներգաարդյունավետության բարձրացումը Շոգեկոմպրեսորային ջերմապոմպային տեխնոլոգիաների կիրառմամբ

Բոլոր ջերմային պոմպերը թանկարժեք սարքավորումներ են, սակայն նրանց կողմից արտադրվող ջերմության ցածր ինքնարժեքի և էկոլոգիապես մաքուր լինելու հետևանքով դրանք կարող են արժանի մրցակցություն ներկայացնել օրգանական վառելիքի տեսակների հիման վրա ավանդական աղբյուրներին: Շոգեկոմպրեսորային ՋՊ աշխատանքի տնտեսական ցուցանիշները հիմնականում որոշվում են էլեկտրաէներգիայի սակագներով: Փոխակերպման գործակցի $\phi=3,45$ միջին տարեկան արժեքի դեպքում էներգիայի ծախսերը կկազմեն մոտ 337կՎտ.ժ/Գկալ: ՋՊՏ-ի ավտոմատացման բարձր աստիճանը թույլ է տալիս նվազագույնի հասցնել ջերմապոմպային տեխնիկայի սպասարկման բոլոր այլ տեսակի ծախսերը: Էներգածախսի տեսակարար մասն արտադրվող ջերմության լրիվ ինքնարժեքում կարելի է գնահատել 85...90%-ի չափով: Յետևաբար, 45դր/կՎտ.ժ էլեկտրաէներգիայի սակագնի դեպքում ՋՊՏ-ի կողմից արտադրվող ջերմության ողջ ինքնարժեքը կկազմի մոտ 17,8հգ. դր/Գկալ կամ 15,3դր/կՎտ.ժ: Յամեմատություն համար՝ ՅԿԿ-ի կողմից սահմանված ջեռուցման համար ջերմային էներգիայի միադրույք սակագինը 26դր/կՎտ.ժ է:

Չնայած, որ ջերմային պոմպերը կարող են արտադրել համեմատաբար էժան ջերմություն,

ջեռուցման համակարգերում ՋՊՏ-ներին ներդրումային գրավչությունը դեռևս ցածր է կապիտալ ծախսերի համեմատաբար երկար հետզնման ժամկետների պատճառով: ԱՊՅ երկրներում հիմնականում ներկայացված են արևմտաեվրոպական արտադրողների ՋՊ-ները (Գերմանիա, Ավստրիա), և դրանք բավականին թանկ են: Բացի հիմնական սարքավորումների արժեքից, դրա մոնտաժից և կարգաբերումից ջերմամատակարարման ոլորտում ամենից տարածված երկրաջերմային ՋՊՏ-ները պահանջում են հորատման աշխատանքների կատարում: Յաշվարկները ցույց են տալիս, որ այդպիսի ՋՊՏ-ի լրակազմը իր օժանդակ սարքավորումներով և տեղադրումով կաթսայից ջերմամատակարարման համեմատ թանկ է 2,4...2,8 անգամ [50]: Բացի այդ, սահմանափակվում է ջերմաստիճանը ջերմային պոմպի ելքում: Առավելագույն ջերմաստիճանը, որը կարող է ապահովել երկրաջերմային ջերմային պոմպերի տաքացնող կոնտուրը, որպես կանոն, կազմում է 55...65°C:

Ջերմային պոմպերի դասակարգումը ներկայացված է Յավելված 2-ում:

Ջերմամատակարարման համակարգերում ՋՊ աշխատանքի սկզբունքից կախված՝ տարբերում ենք ՋՊՏ կիրառման երկու հիմնական սխեմա.

- անջատ (monovalent), երբ տարեկան ջերմային պահանջարկն ամբողջությամբ ծածկվում է ՋՊ կողմից, ներառյալ սեզոնային «պիկային» ջերմային բեռնվածքները:
- համակցված (bivalent), երբ ջերմային պոմպը ծածկում է տարեկան ջերմային էներգիայի պահանջարկի 50-ից 70%-ը, շատ ցածր արտաքին ջերմաստիճանների դեպքում գազաթնային ջերմային բեռնվածքը ծածկվում է ջեռուցման լրացուցիչ աղբյուրների հաշվին, առավել հաճախ բնական գազով, ածխով կամ հեղուկ վառելիքով աշխատող


կաթսաներով: Այս սխեման կիրառվում է նաև, երբ հին շենքերը վերանորոգելիս որոշվում է շարունակել գոյություն ունեցող կաթսայի շահագործումը:

ՁՊ օգտագործումը հեռանկարային է համակցված սխեմաներում՝ գույքով Եներգիայի այլ այլ ընտրանքային աղբյուրների (արեգակնային, հողմային, կենսազանգվածի) հետ, քանի որ հնարավորություն է տալիս, օպտիմալացնելով այդպիսի համակարգերի պարամետրերը, հասնել ամենաբարձր տեսական ցուցանիշների:

Մեծ հեռանկար ունի արդյունաբերական ձեռնարկությունների ցածր ջերմաստիճանային ջերմային արտանետումների Եներգիայի օգտահանումը ջերմային պոմպերով: Օրինակ, ՁԵԿ-երի հովացման աշտարակների միջոցով շրջապատող միջավայր տրվող ջերմության քանակությունը լրիվ բավարար է քաղաքի մի մեծ շրջանի ջերմամատակարարման պահանջների բավարարման համար:


Ջերմապոմպային տեխնիկայի ներդրումային գրավչությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է գոնե ջեռուցման սեզոնում ապահովել դրա շարունակական աշխատանքը շահագործման բազային ռեժիմում: Աշխատանքի այդպիսի ռեժիմը հնարավոր է համակցված ջերմաղբյուրների կազմում (ջերմակաթսայատների) ջեռուցման համար և արդյունաբերական ձեռնարկություններում ամբողջ տարվա ընթացքում աշխատող տեխնոլոգիական ջերմա- և ցրտամատակարարման համակարգերի կազմում: Հաշվի առնելով ջեռուցման ժամանակաշրջանում ջերմային բեռնվածքների բաշխման բնույթը՝ համակցված ջերմաղբյուրի կազմում (նկ.2.4) ՁՊ-ն ընդունակ է աշխատանքի բազային ռեժիմում ծածկել սեզոնային ջեռուցման

բեռնվածքի զգալի մասը: Ընդ որում նրա տեղակայված ջերմային հզորությունը կարող է զգալիորեն ավելի ցածր լինել ջեռուցման համակարգի հաշվարկային բեռնվածքից:



Նկ .2.4.3 ամակցված ջերմադրյունըի կազմում ՇԿՁՊ-ի աշխատանքի սկզբունքային սխեման
 1-գոլորշացուցիչ ,2-կոմպրեսոր ,3-հաղորդակ ,4-կոնդենսատոր ,
 5-դրոսել ,6-կաթսա,
 7-ջերմոլթյան սպառիչ ,8-ցանցային պոմպ ,9-մատակարարող պոմպ

Այսպիսի սխեման հնարավորություն է տալիս ապահովել էներգաարդյունավետ-տոլթյան բարձր ցուցանիշներ: Օրինակ ՁՊ-ում ջեռուցման համակարգի հետադարձ ցանցային ջրի մինչև 56°C տաքացման դեպքում կունենանք $7,5 \geq \varphi \geq 3,6$, համապատասխանաբար, վերականգնվող և թափոնային աղբյուրների $30 \geq t \geq 5^\circ\text{C}$ ջերմաստիճանների միջակայքի համար: Այդպիսի պայմաններում միշտ ավելի ձեռնտու է օգտագործել ՁՊ-երը, այլ ոչ թե օրգանական վառելիքով աշխատող կաթսաները (նկ .2.5):



Նկ .25. Տարբեր ջերմաղբյուրներին ցածր մոլթյան արտադրություն և վրավառելիքի միջին տեսակարար ծախսը, կգ պ.վ./ՊՋ

Վերականգնվող և թափոնային ջերմության աղբյուրներին օգտագործման շնորհիվ ՁՊ-երը կարող են ունենալ ավելի բարձր էներգաարդյունավետության տեսակարար ցուցանիշներ, քան օրգանական վառելիքով աշխատող կաթսայատները և բարձրարդյունավետության մբջէՑ-երը: Սակայն հարկ է ընդգծել, որ միայն 2,45-ից բարձր փոխակերպման գործակցի արժեքների դեպքում ՇԿՁՊ-երը չեն գիշում 90% օ.գ.գ.-ով ժամանակակից կաթսայատներին:

Չաշվի առնելով ջերմային պոմպերում էներգիայի փոխակերպման առանձնահատկությունները՝ 2008թ. դեկտեմբերին Եվրախորհրդարանի կողմից ընդունվել է վերականգնվող էներգիայի աղբյուրներին օգտագործման Դիրեկտիվ (Directive on the Use of Renewable Energy Sources), որը թույլ է տալիս 2,875 ավելի ցածր փոխակերպման գործակց ունեցող ջերմային պոմպերի օգտագործումը:

Կաթսաները նպատակահարմար է օգտագործել ՁՊ-ից հետո ջերմակրիլրացուցիչ տաքացման համար: Ջերմության համակցված արտադրության այդպիսի սխեման հնարավորություն է տալիս բարձրացնել ջերմամատակարարման ընդհանուր


հուսալի ությունը և որակը, քանի որ աղբյուրներինց մեկի աշխատանքի ընդհատումը չի հանգեցնի սպառիչներին ջերմության առաքման առհասարակ ընդհատման:

2.5. Աբսորբցիոն բրոմլիթիոլմային ջերմային տրանսֆորմատորներին առանձնահատկությունները

Ցածր պոտենցիալային բնական էներգիայի կամ երկրորդային ցածր ջերմաստիճանային էներգառեսուրսների ջերմությունն օգտագործման համար պիտանի բարձր պոտենցիալային ջերմային էներգիայի փոխակերպման ջերմապոմպային տեխնոլոգիան ոչ թե ավանդական էներգաաղբյուրների հերթական արդիականացումն է, այլ ջերմության ստացման նոր, առաջադեմ, բարձր արդյունավետությամբ և էկոլոգիապես մաքուր տարբերակ է: Դա է վկայում արտասահմանում աբսորբցիոն բրոմլիթիոլմային տեխնոլոգիաների արտադրության լայն տարածումը, որը պայմանավորված է բարձր սպառողական հատկանիշներով. էկոլոգիական մաքրություն, էլեկտրական էներգիայի նվազագույն օգտագործում, անաղմուկ աշխատանք, ծառայության երկար ժամկետ: Քանի որ բոլոր պրոցեսներն ընթանում են վակուումի պայմաններում, բացառվում է նյութի թափանցումը արտաքին ջերմակիրների մեջ և շրջակամիջավայր:

Գոյություն ունեն ԱԲՁՏ-ների մի շարք տեսակներ (նկ. 2.6), որոնք կատարում են տարբեր գործառնություններ: ԱԲՁՏ-ները կարող են արտադրել ցուրտ, միաժամանակ ցուրտ և ջերմություն, ինչպես նաև փոխակերպել ջերմությունը բարձր ջերմաստիճանային մակարդակից ցածր ջերմաստիճանայինի

(ցածրացնող ԱԲՁՏ) կամ ցածր շերտ մաստիճանային մակարդակից ավելի բարձրի (բարձրացնող ԱԲՁՏ):



Նկ .2.6. ԱԲՁՏ դասակարգումը

ԱԲՁՏ մեծամասնությամբ նախատեսված է ջրի հոսքի համար, որն օգտագործվում է կենցաղային և տեխնոլոգիական օդորակման համակարգերում: Վերջին տարիներին ավելացել է գազային կամ հեղուկ վառելիք օգտագործող հնոցով, ուղղակի տաքացմամբ ԱԲՁՏ-ների

արտադրողները, որոնք ամռանը կարող են աշխատել սառնարանային մեքենայի ռեժիմում, իսկ տարվացուրտ ժամանակաշրջանում՝ ջրատաքացուցիչ կաթսայի ռեժիմում: ԱԲՁՏ հիմնական արտադրողներն են ճապոնիան, ԱՄՆ-ն, Չինաստանը և Կորեան:

ԾԿՁՊ հիման վրա ՁՊՏ-ները հիմնականում կիրառվում են գտել բնակելի ոլորտում, իսկ ԱԲՁՊ-ները՝ արդյունաբերության մեջ: Ձերմոլթյան փոխանցման պրոցեսները արսորբցիոն մեքենաներում կատարվում են համատեղ ուղիղ և հակառակ թերմոդինամիկական ցիկլերի միջոցով, ի տարբերություն ԾԿՁՊ-ների, որոնցում բանոց մարմինը (ֆրեոն) կատարում է միայն հակառակ թերմոդինամիկական ցիկլ:

ԱԲՁՊ-ի արդյունավետությունը (COP) շատ բանում կախված է այն ջերմաստիճանային միջակայքից, որում այն շահագործվում է [51]: Որքան վերջինս ներդրում է, այնքան բարձր են տեղակայանքի էներգետիկական ցուցանիշները: Տաքացվող ջերմակրի միջև մոտ 85°C և օգտահանվող ջերմադրյունի մոտ 20°C ջերմաստիճանների դեպքում լուծոլթի միաստիճան ռեգեսերացիայով ԱԲՁՊ-ի ջերմոլթյան փոխակերպման գործակիցը՝ $\text{COP}=1,65\dots 1,75$:

Քանի որ արտադրվող ջերմոլթյան մեջ ԱԲՁՊ-ում օգտահանվող էժան, թափոնային ջերմոլթյան մասնաբաժինը կազմում է մոտ 40%, վառելիքի տեսակարար ծախսը կաթսայի համեմատ 35...50%-ով ցածր է: Դա նշանակում է, որ բոլոր տեսակի ԱԲՁՊ-ների դեպքում վառելիքի օգտագործման արդյունավետությունը 1,5...2 անգամ բարձր է, քան կաթսայում: Օրինակ՝ երբ ջերմային էներգիայի արտադրողական ջերմապոմպային գործակիցը հավասար է $\eta_{ջպ}=1,7$, շնորհիվ $15\dots 40^{\circ}\text{C}$ ջերմաստիճանով ցածր պոտենցիալային ջերմոլթյան տեղական

աղբյուրների օգտագործման՝ ԱԲՁՊ-ի իդեալական ցիկլը ապահովում է վառելիքի ջերմության տեսակարար տնտեսում՝ $\Delta B = 1 - 1,7^{-1} = 0,412$ կամ 41,2%:

Ներկայումս աբսորբցիոն տեխնիկայի արտադրողներն առաջարկում են այնպիսի ԱԲՁՊ-ներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են միաժամանակ աշխատել որպես սառնարանային մեքենաներ՝ ապահովելով սառը ջրի մատակարարում 7/12°C ջերմաստիճանային գրաֆիկով [52]: Արդյունքում, ինչն անկարևոր չէ, գործնականորեն բոլոր դեպքերում հնարավոր է ապահովել աբսորբցիոն տեղակայանքի անընդհատ շահագործում ամբողջ տարվա ընթացքում:

2.6. Աբսորբցիոն սառնարանային մեքենաների դասակարգումը և աշխատանքի սկզբունքը

ԱՍՄ-ները լինում են ուղղակի և անուղղակի տաքացմամբ, ըստ կիրառվող սխեմայի միաստիճան, երկաստիճան և եռաստիճան: Ուղղակի տաքացմամբ մեքենաներում որպես ջերմաղբյուր կարող է օգտագործվել բնական գազը կամ այլ վառելիք, որն այրվում է անմիջապես սարքավորումում: Անուղղակի տաքացման մեքենաներում օգտագործվում է շոգի կամ բարձր ջերմաստիճան ունեցող այլ ջերմակիր: Այդ դեպքում որպես ջերմաղբյուր կարող է հանդիսանալ կաթսայատունը կամ, օրինակ, կարող է օգտագործվել որևէ տեխնոլոգիական պրոցեսի ընթացքում առաջացած երկրորդային ջերմային էներգիան:

Գոյություն ունեն բրոմալիթիումային և ամոնիակաջրային ԱՍՄ-ներ: ԱԲՍՄ-ում որպես սառնարանային ագենտ օգտագործվում է ջուրը, իսկ որպես աբսորբենտ (կլանիչ)՝ լիթիումի բրոմիդը (LiBr): Ամոնիակային ԱՍՄ-ներում որպես սառնարանային

ագետնտօգտագործվում է ամոնիակը՝ NH_3 , իսկ որպես արսուրբենտ՝ ջուրը: Ներկայումս ավելի լայն տարածում են գտել բրոմալիթիումային արսուրբեցիոն սառնարանային մեքենաները [53]:

Սառնարանային ագետնտի կոնցենտրացիայի փոփոխությունը արսուրբերում և դեսուրբերում ուղեկցվում է հագեցման ջերմաստիճանի փոփոխմամբ: Արսուրբերի և դեսուրբերի միջև արսուրբենտի շրջապտույտի ընթացքում էներգիայի կորուստը նվազեցնելու համար տեղադրվում է ռեկուպերատիվ ջերմափոխանակիչ:

Միաստիճան ԱՍՄ-ները, որպես կանոն, տեղադրում են այնպիսի շինություններում, որտեղ առկա է հեշտ հասանելի թափոնային ջերմություն աղբյուր: Այս տիպի մեքենաները օգտագործվում են օդափոխության համակարգի կազմում և որպես սառը ջրի աղբյուր գանազան տեխնոլոգիական գործընթացներում: Արտադրողների մեծ մասը առաջարկում է միաստիճան ԱՍՄ-ներ մոտ 350կՎտ-ից մինչև 5,2ՄՎտ հզորությունների տիրույթում [54]:

ԱԲՍՄ-ի աշխատանքի սկզբունքը հիմնված է լիթիումի բրոմիդի լուծույթի՝ դրանից ավելի սառը ջրային գոլորշիները կլանելու (արսուրբելու) ունակության վրա: Սառեցվող միջավայրը մղվում է գոլորշացուցիչ, որտեղ սառեցվում է մինչև անհրաժեշտ ջերմաստիճանը վակուումում սառնարանային ազդակի՝ ջրի գոլորշացման հաշվին: Ջրային գոլորշիները գոլորշացուցիչից անցնում են արսուրբեր, որտեղ լիթիումի բրոմիդի (LiBr) խիտ լուծույթը, հանդիսանալով ջրի ուժեղ արսուրբենտ, կլանում է գոլորշին և վերածվում նոսր լուծույթի, որը մղվում է գեներատոր: Այնտեղ ջուրը գոլորշացվում է ջերմային էներգիայի արտաքին աղբյուրի հաշվին (տաք ջուր, ջրային գոլորշի,

բանած գագեր կամ երկրորդային
էներգառեսուրսներին (տես սակներ): Որքան խորն է
անհրաժեշտ հովացնել օդը կոմպրեսորից առաջ,
այնքան ավելի շատ ջերմություն է անհրաժեշտ
ծախսել գեներատորում ջրի գոլորշացման վրա,
որպեսզի ստացվի LiBr խիտ լուծույթի ավելի մեծ
քանակություն: Յագեցած լուծույթը ԱՄՄ
գեներատորից վերադառնում է արտորբեր:
Գեներատորում արտադրված ջրային գոլորշին
կոնդենսանում է ԱՄՄ-ի կոնդենսատորում:

Երկաստիճան ԱՄՄ-ները կարող են լինել տարբեր
հարմարադասման: Երկու հիմնական
հարմարադասումներն են՝ երկու կոնդենսատորով
համակարգերը և երկու արտորբերով համակարգերը:
Այս սարքավորումներում երկու կոնդենսատոր կամ
երկու արտորբեր օգտագործելու շնորհիվ
ապահովվում է արտորբերից սառնարանային
ագենտի ավելի արդյունավետ անջատում ջերմային
էներգիայի ավելի փոքր ծախսի դեպքում:

Երկաստիճան ԱՄՄ-ների աշխատանքի սկզբունքը
հիմնվում է այն բանի վրա, որ սառնարանային
մեքենայի հովացման ունակությունը նախևառաջ
կախված է գոլորշացուցչում գազային \$ագի
փոխակերպված սառնարանային ագենտի
քանակությունից: Արտորբերից դսորբվող
սառնարանային ագենտի քանակությունը հնարավոր
է ավելացնել՝ օգտագործելով կոնդենսատորում
անջատված կամ արտորբերից ընթացքում ի հայտ
եկած ջերմային էներգիան:

Այս տիպի մեքենաներում, որպես ջերմային
էներգիայի աղբյուր կարող են օգտագործվել բարձր
ճնշման գերտաք շոգի կամ տարբեր տիպի
վառելիքներ, հիմնականում օգտագործվում է
բնական գազ: Երկաստիճան ԱՄՄ-ն նպատակահարմար է
օգտագործել այն դեպքերում, երբ կա բարձր

ճնշմամբ գերտաք շոգու աղբյուր: Թեև երկաստիճան ԱՍՄ-ները ավելի արդյունավետ են, սակայն միևնույն ժամանակ ավելի թանկ են միաստիճան ԱՍՄ-ներին:

Եզրակացու թյուններ երկրորդ գլխի վերաբերյալ

